

ի ժամանակս թագաւորութեան Մեծին Տրդատայ եւ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ շինեցան ՚ի մեծամեծ Իշխանացն մերոյ ՚ի Ս. Քաղաքն Երուսաղիմ բազում վանորայք, որոյ ահանատես եղեալ գրեցի իւրաքանչիւր գնոսա յականէ յանուանէ :

1°. Հառաքման վանքն Պետրոսի Առաքելոյ . շինեցաւ յարքունի գանձէն, արտաքոյ քաղաքին ՚ի ներքոյ Սիօնի յարեւելից կուսէ . (այժմ՝ աւերակ, միայն այրն երեւի) (1) :

2°. (2) Պանտայ վանքն Ս. Կարապետի . յարեւելից կողմն Ձիթենեաց լերինն՝ շինեցաւ արքունի ծախււք, յանուն Ս. Կաթողիկէին որ ՚ի Վաղարշապատ քաղաքի, որ է ՚ի ձեռս Աղվանից (2) :

Այս վանք կանգուն կայր մինչեւ 12° դար . յետ մեկնելոյ խաչակրաց ՚ի Պաղեստինոյ կործանեցին Եգիպտացիք, մինչ զի տեղւոյն Լւ անուան անգամ լինիլ անյայտ, որպէս այլ վանորայք : Իսկ յաւուրս մեր (1868) վանահայրն Ռուսաց դնեաց վայս տեղի յԱրարացւոց իրրեւ պարտէղ թղենեաց և անդ սերմանելի, և ՚ի մաքրելն զհողն երեւեցան գերեզմանք նախնեացն Հայոց արձա-

(1) Հրամանաւ և ծախիւք երանելոյն Տրդատոյ թագաւորին Հայոց կանգնեալ է Անքոս այս հայակապ . այլ թէ յորում Թուսկանի կործանեալ և ՚ի սպառ եղճեալ և յապահանսութիւն գարձեալ, չէ յայտ : Ի ձեռագիր օրինակս զոր ունիմք առ մեզ, գրեալ է ՚ի կողմն Սելւփանայ, սահայն քննելով զտեղին գտանի այժմ ՚ի Սիօն իրր 13 վայրկեան զեպ յարեւել, փոքր ինչ զառ ՚ի վայր իջանելով . աւստի յայտնի երեւի Սելւփանայ գիւղն իւր պարագայիւք յարեւելս : Յաւուրս մեր 1887 զտեղին զայս որոնեալ եգիտ կոմսն Գաղղիտցի, և գնեաց յԱրարացւոց զտեղին՝ շրջապատ բովանդակ ագարտիօքն հանդերձ, յորս տնկեալ են ծառք ձիթենեաց . և յանձն արար Օգոտոփնեան կրօնաւորաց, սրբ սկսան պեղել զհողն և մաքրել զտեղին, բաց ՚ի միոյն երեւեցաւ միւս եւս այր լցեալ հողով, և մնացորդ հտոտառուն որոնց . և 12 ջրամբարք, և ջրէղջք, եւ քանի գրամք պղնձիք Աշրիանոսի և կոտտանդեայ :

(2) Հայր Դ. Ալիշան լճարգմանէ Պանդպէտնի, վերպակ երեւի, զի Պանտափանքն Պանոն յանուանէ առեալ է զճագումն և յանուն Ս. Կարապետի է :

(3) Պանտափանքն որ յարեւելից կողմանէ ՚ի Ձիթենեաց լերինն կայ, Պանոն ոմն Տքենաւոր յԱղվանից եղեալ նախաջինեղ, եւ այժմ՝ Աղւանք ըստանայ ունի :